

ՈՐԲԻԿԸ

Ճիշտ է, հայրիկ, որ երբէք մայրիկ չեմ ունեցել ես:
Եւ մանուկը պատասխանի սպասելով, պահ մի դաղրեց
դասաւորելու իւր փոքրիկ, արճճից թափած, զինուորները:
Այսպիսի ծանր հարց շօշափելու գիտակցութիւնը, մի առեղ-
ծուած, որ վեր էր իւր հասակի խնդիրների շարքից, ուրեմն
և արգելուած՝ իւր համար, խորին կանխահաս վիշտ էին դրոշ-
մում նորա մանկական, կապոյտ, սիրուն աչիկների մէջ:

Հայրը զարմացած այդ անսպասելի հարցից, ձեռքին ե-
ղած թերթը ճմոթկել սկսեց, դադարեց կարդալուց, մնաց լուռ
անխօս, իւր ներսը յուզող հակասական զգացումներին մատ-
նուած, ինչպէս լճի մէջ ձգուած մի քար, երեխայի հարցը շար-
ժեց նորա ներսը եղած զգացումները, նետգհետէ ընդլայնելով
իւր սրտի խորքում թագնուած յոյզերի շրջանը, իւր անախորժ
յիշողութիւնների ամբողջ տիզմը:

— Ինչպէս չէ, սիրելիս. մայրիկ ունեցել ես. Բայց, դըժ-
բաղդաբար, հինգ տարի է, ինչ մեռել է...

Ա՛, հչ, այդ պատուազուրկ արարածը չէր սեռել: Նա ապ-
րում էր: Եւ ապրում էր իւր մոլի կեանքն ու գայթակղելի ա-
րարքները արար աշխարհին ցոյց տալով: Դեռ անցեալ շաբաթ-
էր, որ յանկարծ պատահեց նորան Բուլոնի անտառում, անհոգ
մեղկութեամբ ձգուած կառքի բարձերի վրայ, աչք ծակող արդ
ու զարդով, որ ամենքի ուշադրութիւնն էր գրաւում. նորա-
շարժումներն այն սիրազգիութեամբ շեշտերն ունէին, նորա շրթերի
վրայ այն կէս-ժպտուն սուր, խայթող ժպիտն էր խաղում, որ
ոչ մի պատուաւոր կնոջ վրայ չէք նշարիլ:

Կատաղի քինախնդրութեամբ լի, այդ անակնկալ հանդի-
պումից, նա կշուց այն սիրաբորբոք կենսունակութեան չափը
որ հինգ տարուայ անջատումը դեռ չէր կարողացել մեղնել
իւր մէջ: Օ՛, շատ քիչ կին կարող էր պարձենալ, թէ պաշտ-
ուել է որևէ է տղամարդից, ինչպէս իւր Հանրիէտաը:

Գլուի ցաւը բռնած, քունքերը ափերի մէջ առած, արմունկ-

ները կոթնեց լուսամուտին։ Այստեղ՝ վարը, փողոցում և մայթերի վրա, մարդկային կրկին հոսանք էր եռում, հոսում քաղաքի կենդրոնից դէպի թելլիի սիրուն բարձունքը։ Բայց նա ոչինչ չէր նկատում, բացի իւր մոայլ մտքերի անվերջ շարքից։

Յիշողութիւնը եռում էր նորա մէջ։ հիա համեստ կարուհու ալեծուփ ստուերադէմը, գեղձան մազերով, ծաւ աշքերով, հութակի ձայնի հոգու խորը թափանցող անուշ ելէջով։ Աըղեօք ինչպիսի սիրօշարակի հրապոյրներով էր կարողացել գրամել իրեն մինչ այն աստիճան, որ կարծում էր թէ երջանկութեան և երազուն յափշտակութիւն գանձերից ամենաթանգագինն էր ձեռք բերում։

Սակայն ամենքն էին զգուշացնում նորան հեռու կենալ նորանից, աչքի առաջ ունենալով բազմաթիւ խօսք ու զբոյց, անպատշաճ արարքներ, մանաւանդ նորա թոթոշիկ մանչը, որ մի գիտէ որտեղից էր ժառանգել և որին դեռ մնուցանում էր ուրիշ դայեակի մօտ։

Բայց կիրքը կոյր է միշտ։ Հանրիէտափ մի լացը նորան աւելի համոզեցին, բան հազարաւոր խոհեմ աղբարարութիւններ և կատարեալ հաւատով ընդունեց այն պատիր հէքիաթն ու շինծու պատմութիւնը, որ երիտասարդ սիրունկեկը լցրեց նորա ականջները։ Ամուսնութիւն կատարուեցաւ, բայց օրէնքի խստութիւնը արգելք եղաւ որդեզրելու և օրինական դարձնելու այդ անզարմ զաւակը։ Բայց նա չկամեցաւ, որ անհարազատութեան ծանրութիւնն զգայ այդ փոքրիկը։ Դայեակից վերցրեց, իւր օջախն առաւ և օրէօր, որչափ աւելի էր նշմարում փոքրիկի և մօր մէջ եղած նմանութիւնն, այնքան աւելի էր կապւում նրան։

Իրեւ երախտագիտութեան արտայայտութիւն այդ մեծահոգութեան դէմ, տիկին Շալիէն մի գեղեցիկ առաւօտ չքացաւ ամուսնական յարկի տակից առանց որև է պատճառարանութեան, իրեւ առհաւատչեայ թողնելով իւր համար ծանրութիւն եղող մանկիկը։ Ամուսնութիւնը միայն վեց ամիս էր տեսելու։

Շալիէն մարմնով մի սարսուռ մնցաւ։ Տանջող անձկութիւնը ճնշում էր նորա յաղթ ուսերը։ Չնայելով յուլիսեան տարբուկ երեկոյին, կարծես սառը, մինչև ոսկրների ծուծը թափանցող ձեան տարափի տակ էր կանգնած, որ անդադար մաղւում էր նորա գլխին։

Լուսամուտի փեղկը գոցեց և սկսեց դիտել բացնամակների ալբոմը դիտող շիկահեր փոքրիկին։

Խեղճ մանչուկը ի՞նչ մեղք ունէր, որ այդ ամօթը իւր անմեղ ուսերի վրայ էր կրում։

Բարեկամները խորհուրդ էին տուել ազատուել նորանից, — ընկեցիկների խղճուկ հօտը ստուարացնող բանակն ուղարկել: Բայց նա մերժել էր, զգացուած շնորհալի երեխայի վարժուածից և սիրում էր յանձին նորա, առանց ինչն իրեն իսկ խոստպահնելու, անյայտացածին ու նորա պատկերը:

Ամեն բարի գործ, անշուշտ, երախտազիտութեան կարժանայ, ուստի և «կացինը կոտրելուց յետոյ կոթն էլ դէն չձգեց»: Փոքրիկ մանուկին պահեց իւր մօտ, իւր լքուած կեանըըն այսուհետև մի նպատակ ունէր, — կրթել փոքրիկ Ստեփանին մինչև այս օրը, երբ նա կը կարողանար իւր գլխի ճարը տեսնել, կամենում էր նորան ազնիւ ու շիտակ արհեստաւոր դարձնել, ինչպէս իրեն որդեգրող հայրն էր:

Բայց իրագործելիք նպատակը դժուար էր, իւր արհեստը ոչ աւելորդ ժամանակ և ոչ էլ սպասուհի ունենալու դիւրութիւն էր տալիս: Ստիպուած էր անձամբ հոգ տանել տան տեսութեան անախորժ պարտաւորութեան, զրադուել ուտելիքի ընտրութեամբ և պատրաստելով, ուստի և չնայելով իւր բոլոր ջանքերին՝ իւր ձախլիկ հոգատարութիւնն ու քնքշանքը չէին կարողանում մօրը յատուկ խնամատարութեան պակասը լը-րացնել:

Բայց, փառք Աստուծոյ, աշխարհիս երեսին բարեսիրտ մարդիկ դեռ գոյութիւն ունին, Ընկեր-հարլւան, ծանօթ, նոյն իսկ պիտոյքները հայթայթողները, ամենքն իրար հետ մրցել էին ուղում իրենց սիրաշահութեամբ: Այժմ ամենաղժուար հոգմն արդէն բաշուած էր:

Ապագայում, երբ մանջուկը հասակաւոր մարդ կը դառնար, անշուշտ կկարողանար հասկանալ այդ անշահագրգիւ հոգածութիւնն, ջանադիր անձնադրութեան արժէքը և լքուածու երեսից ձգուած հօր դեռ բոլորովին չգոցուած վշտի սպիները բուժել գիտենար:

Նուրբ կօշիկների կռիչը, մետաքսեայ զգեստ խշխշոց լը-սուեցաւ, ներսի զանգակի շեշտակի ձայնի հետ: Շալվէն տեղից վեր թռաւ: Դուռը բանալով, յետ-յետ գնալու ակամայ, մի շարժում արեց, աչքերը տրորեց, կարծես, վախենում էր, որ տեսածը երազ լինէր:

Հանրիէտաը... բայց իսկապէս Հանրիէտան էր:

Եւ մինչեւ նա սառած, կանգնած էր մնացել, ջղային դո-կից յուղուած, տեսիլը հանգիստ տեղ ըստելով: Սեղա-նի մի անկիւնում տեղաւորեց իւր ոսկէ ձեռքի կապոցը, փա-

կազրերով զարդարուն այցեսումսերի տուփը և մի քննական արգահատանքի հայեացը ձգեց իւր նախկին ընակարանի վրայ:

Հոգացող ձեռքի պակասն իսկոյն աչքի էր ընկնում աթոռների վրայ տիրող խառնութիւնորութեամբ. օձիքն ընկած էր բարթու հացի կեղեկի հետ, առանց լուսամիոփի ճրագը դըրուած էր մի անկիւնում միշից սեացած ապակիով։ Զգացւում էր, որ կանացի ձեռք չկայ տան մէջ։

—Արի, իմ փոքրիկ Ստեփանիկս, արի բարեկիր ինձ։ Ինչպէս սեծացել ես դու։

Սկզբում բոլորովին շփոթուած երեխան, շուտով ընտելացաւ և մօտեցաւ սիրուն տիկնոջը, որ սկսեց գգուել նորա գանգուր, շիկահեր խոպոպիկները։

—Ոչ մի շահ չեմ տեսնում, չոր-չոր ասաց արհեստաւորը, որ Ստեփանիկլ հաղորդակից լինի մեր գաղտնիքին։

Հանրիէտը զլուխը կախեց։ Առանձնակի բաղադրեց իւր արարքը, խոստովանեց իւր սխալը։ Բայց եթէ ինքը վատ էր վարուել, միթէ նա էլ սեղաւոր չէր, որ հեռատեսութիւն չէր ունեցել, միթէ արդուզարդի, վարելչութեան ծարաւ հագուած կապուած կարուեին ստեղծուած էր «սե-խանձող» դառնալու տան մէջ։ Իւր յետադէմ, խաւարամիտ գաղափարներով՝ նա մի հաստլիկ, բարի աղջիկ պիտի առնէր, որ խոհանոցի պղնձեղէնի փայլիլութով և կահկարասիքի մաքրութեամբ իւր գաղափարների արտայայտիչը կդառնար։

Մատաղահաս կիսը խօսում էր հանգիստ ու մեղմ ձայնով բայց հեզնող, սուր շեշտով, ոչ մի յուզում, ոչ մի ապաշաւ չէր այլայում նորա ձայնի միօրինակ յստակութիւնը։

Անցեալի յիշողութիւններից յետոյ նա անցաւ ներկայ դրութեան և յայտնեց, թէ շատ ուրախ է, որ զանազան արկածներից յետոյ, հանդիպել է իւր այժմեան առատաձեռն, մեծահոգի և իրենով յափշտակուած տարփածուին։ Նա, դժբաղդարար, արդէն անցրել է առաջին երիտասարդութիւնը, բայց իւր մեծ հարստութիւնը ծածկում էր այդ թեթև պակասը։

Արդուզարդի խրցակից (τρουσσε) մի փոքրիկ, սիրուն հայելի ջոկելով, Հանրիէտալ՝ ամեն երկու խօսքին տրորում էր շրթունքերին հաստ շերտով քսած կարմրափայլ սնդոյրը։ Մանուշակի, սեխակի և յասմիկի բուրմունքը սենեակն էր բռնել։

Շալվէն, յուզուած ու վրդովուած, ընդհատեց այդ շաղակրատանքը։

—Վերջապէս, կարծում եմ, այստեղ չէք եկել ձեր անկարգ ընթացքի մանրամասնութիւնները պատմելու։

Այս բաղաքավարութիւնից հեռու ընդհատման առաջ, եկողն ստիպուած եղաւ իւր գալու շարժառիթը պարզել: Իւր ազատութիւնը ձեռք բերելու ցանկութեամբ, նա կկամենար ապահարզանով «մկրատել» այնքան թիթեամտութեամբ կապած ամուսնութեան հանգոյցը և ամուսնալուծութիւն ստանալ. միայն երկիւղ էր կրում, որ Շալվէն քինախնդրութիւնից դըրդուած, կդանդաղէր գործը արդարադատութեան յանձնելու: Այս ևս աւելացրեց, որ դատարանի վճռած արդարացի տուգանքի վճարումից յետոյ, իւր մօտ կառնէր իւր փոքրիկ Ստեփանիկին, որովհետև նրա հովանաւորը դառն վշտի յիշողութիւնն անցնել տալու համար անչափ ու անհաշիւ փաղաքշանք էր շռայլում մանկանը:

Մի յանկարծական, անտանելի վիշտ պատեց տիսուր ամուսնուն: Ի՞նչ: Իւր վերջին միտթարութիւնը, իւր միակ հաճոյքը պէտք է խլուէր նորա ձեռքբից: Այդ վատշուէր արարածը, որի դաւաճանութիւնը խաւարել, դառնացրել էր իւր կեանքը, ուզում էր իւր չարամտութիւնը մինչև ծայրը հասցնել:

Մի վերջին ճիգ թափեց հանգիստ, անխոռվ մնալու համար:

—Ձեզնից ոչինչ չեմ պահանջում, բացի այն, որ բոլորովին մոռանաք ինձ: Պահեցէր ձեր դրամն ու տուգանքի հատուցումը ձեզ համար, իսկ երեխային ինձ թողեցէք: Նորան որդեգրել եմ, նա իմս է և վայ նորան ով կփորձէ մօտենալ նորան:

—Բայց, սիրելիս, չը որ դուք ոչ մի իրաւունք չունիք նորա վրայ: Նա չէ կրում ձեր անունը, և օրէնքի առաջ դուք նորա համար բոլորովին օտար մէկն էք:

Բարկութիւնից ինքն իրեն կորցրած, ելաւ, դուռը բաց արեց և հանրիէտախն սանդուղտների վրայ շպրտեց:

—Դուրս, կորիր այստեղից... անզգամ կին, ցոփութեան գին սոկովդ եւ եթէ ես ոչինչ եմ մանչուկի համար, ես, որ «փափա» եմ տուել նորան, մեծացրել, որ հինգ տարուց վեր փայփայում-զգւում եմ, դժւ ես այժմ տէր դառնում նորան, որին հին, կեղտոտ շորի կապոցի պէս մոռացար թողիր կորար, առանց բոպէ իսկ մտածելու նորա ապագայի վերաբերմամբ: Այժմ, երբ մաքուր հագուած-կապուած մեծացրել եմ, բոլորովին արգելում եմ քեզ քո անմաքուր հաղորդակցութեամբ կեղտոտել նորան, թարմ, անմեղ այտերի վրայ քո կարմրադեղով ապականուած և դեռ արատաւոր համբոյըներից չցամքած շըրթունքներդ դրոշմել:

— Գուեհիկ, անպիտան արարած, մոնչաց կինը, կատաղութիւնից սպառնած: Շատ բարի: Կտեսնես, ինչ կանեմ: Երեք օր անց Շալվէն դրոշմուած մի թուղթ ստացաւ: «Ճիկին... Հանրիէտաի խնդրագրի հիման վրայ... ես... դատարանի ատենի վճիռների գործադիր պաշտօնեայս... յայտնելով Պ. Շալվէին... նորա մօտ ծառայող... սպասուեու միջոցով»:

Մնացածն այլ ևս չկարդաց և թեմիսի արդարադատութեան պողպատէ ճիշաններին գեռ ևս անծանօթ պարզամիտի անհոգութեամբ կոչնագիրը դարակի աչքի խորը նետեց:

Մի ամիս յետոյ մի ուրիշ կոչնագրի հետ, որ այս ինչ օրը դատարան էր հրաւիրում նորան, ստացաւ նաև մի յայտագիր տասը Քրանկ տուգանքի, դատարանի հաշտութեան կոչնագիրն անպատասխան թողնելովն համար.

Այս անզամ արդէն գլուխ կորցրած վազվուտեց դատավարութեան ուռուցիկ ձեսկանութիւնների անվերջ դահլիճների շարքը և հազիւ կարողացաւ իմանալ ապեցնող նորութիւնը թէ խնդիրը վերաբերում է ոչ թէ իւր ամուսնալուծութեան գործին, այլ Ստեփանիկի պահպանութեան ու պաշտպանութեան: Ուսերի ուժեղ թոթւումով արտայայտեց իւր զօրեղ վստահութիւնը... դէպի երկրի արդարադատութիւնը: Եւ ի՞նչ զարմանք, եթէ դատաւորները աւելի շուտ մի անարժան մօր իրաւունքն էին ճանաչում, քան իրենը:

Մասամբ հետաքրքրութիւնից դրուած, մասամբ Հանրիէտաի ամօթանքը տեսնելու և դորանով հրճուելու տենչով՝ տարօւած, դատարանի կոչնագրի որոշած օրը ատեան գնաց: Մանուածապատ սրահների երկար շարքի մէջ անվերջ սպասելուց և կուրծքը մետաղէ շղթայով զարդարուն ամբարտաւանքարապանը դիտելուց արդէն այդ օքը կոչուելու յոյսը բոլորովին կորցրած էր, երբ վերջապէս լսուեցաւ Հանրիէտտ կինը Շալվէի դէմ՝ սովորական ոճը:

Խնդրաբեկու աչքերով իզուր որոնելուց յետոյ, նա նշմարեց ուկէ հատակնոցը ամուր կոցցած մի ջենալմէն, թղթակալը անութիւ տակ սեղմած, որ առանց այլկայլութեան դիմեց նորան:

— Դժուք էք Շալվէն: Ո՞ւր է ձեր հաւատարմատարը:

— Որովհետեւ ինքս անձամբ այստեղ եմ, ուստի կարիք չունիմ ոչ հաւատարմատարի, ոչ փաստարանի: Իմ գործն այնքան պարզ է ու արդարացի, որ ինքս կարող եմ պաշտպանել: և տանել:

Մարդը առեղծուածի ժպիտ շարժեց շուրթերին:
—Տեսնենք... դեռ ևս ժամանակ ունիք գործը կարդաւու-
րելու, կամենաժում էք երեխային մօրը յանձնել, թէ ոչ:
—Ամենեին:

—Բարի... Այժմ կհաստատենք դատարան չգալը:
Շալվէն ապշած մնաց, երբ լսեց, որ ինքը դատապար-
տուած է «դատապանցութեան», դատարան չգալու համար:
Դատարանի դրոշմաւոր թղթերը դիզուեցան նորա մօտ,
բայց նա դեռ ըմբռնել չէր կարողանում, թէ ինչպէս է լինում
որ արդարադատութեան ձեռքը հէնց անմեղների վրայ է ծան-
րանում:

Եւ երբ վերջ ի վերջոյ կամեցաւ խորհրդակցել դատաւու-
րութեան բոլոր քաշկոտութներին տեղեակ մէկի հետ, բողոքի
պայմանաժամն արդէն անցած և դատարանի վճիռը գործա-
դրելու ժամանակն էր հասած:

Շալվէն տուն դարձաւ բոլորովին խենթացած կատաղու-
թիւնից, նա կորցրեց իւր բոլոր հաւատը դէպի մարդիկ, դէպի
արդարութիւն, դէպի Աստուած, որովհետեւ այսպիսի ակներն
անիրաւութիւն էր կատարւում օր ցերեկով:

Բայց և անպէս նա հակառակութիւն չցոյց տուեց, —այն-
քան իսոր էր արմատացած իւր մէջ դէպ իշխանութեան ներ-
կայացուցիչն ունեցած յարգանքը, —այն չորս պաշտօնական ըզ-
գեստ կրող անհատներին, —որոնցից մէկը հրճուած էր իւր
եռագոյն երիզով, —որոնք մի բարի առաւօտ եկան երեխային
տանելու:

Նա բաւականացաւ միայն նոցա պաղատելով այնպիսի
մի ձայնով, որ դահճին իսկ կարող էր յուզել:
Կան պարտաւորութիւններ, որոնց կատարելը շատ ծանը
է: Ոստիկանական պաշտօնեան գլուխը մի կողմ դարձրեց և
սկսեց ջղաձգօրէն ընչացքները կրծոտել:

Երեխան արցունք աչքերին իւր պաղատանքն էր միա-
ցրել ինսամակալի աղաչանքներին: Ընկեր-հարևան, անցորդ-
հետաքրքիրներ ժողովուած այդ աղմուկի վրայ, իսիստ անհաճոյ
մակդիրներ էին թափում արդարադատութեան վրէժինդրութիւն
գործադրող պաշտօնեաների գլխին:

—Վերջացնենք, ասաց աւագ պաշտօնակալը:
Կցորդներից մէկը գրկեց կանչւըստող մանչուկին: Փողոցի
մայթի առաջ կանգնած էր մի փակ կառք: Դոնակի վարագոյր-
ներից մէկը յետ քաշուեցաւ, գռնակը բացուեցաւ և յաղթա-
նակի ժպիտը շրթունքներին հանրիէտը վազեց դէպի երեխան:

Աչքերն արիւն կոխած, կատաղի երէի նյան, Շալվէն-
շտկուեցաւ. Անակնկալ մի ոստիւնով յարձակուեցաւ առաջ
վագող կնոջ վրայ և նորա ձիւնափայլ պարանոցը իւր ուժեղ
մատների սեղմակի մէջ առաւ: Կարմրորակ, մանիշակագոյնի
փոխուող, սեացող, լեզուն անպէսք շորի կտորի պէս կախ ըն-
կած, աչքերի զարհուրելի բբերը գուրս ցայտող, դնդերող մի
դէմք պատկերացաւ... Տասը հոդի շրջապատել էին աշխա-
տելով զոհին ազատել, բայց անօգուտ, ուժեղ հարուածներ էին,
որ տեղում էին կատաղած հսկայի վրայ: Բայց նա, շներով շըր-
ջապատուած վարազի պէս, բանի տեղ չէր դնում այդ ամենը և
մարդկային վնասուած մարմիններ էին, որ գլորւում էին
սալարկի վրայ:

Եւ երբ վերջապէս կարողացան յաղթահարել խելակորոյս
կատաղածին, Հանրիէտաթ գլուխը ինչպէս թառամած ցողունի
վրայ եղած ծաղիկ, կախ ընկաւ ջարդուած կոճիկների վրայ:
Սպասող փակ կառքը ոստիկանատուն տարաւ անշնչացած
դիակը, Մարդասպանը հլու-հնազանդ թողեց, որ ոստիկանա-
կան պաշտօնեաները իրեն տանեն, ուր որ ուզում էին: Խըռ-
նուած ամբոխը ցրուեցաւ:

Իրարանցման վայրում մնաց միայն մոռցուած, շիկահեր,
սիրտ կտրտող հեծկլատանքով դառն արցունք թափող, այդ-
բոպէից որբ մնացած մի մանուկ...

Փր. թ. Տ. Վ.